



ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԷԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Տ. ՆԵՐՍԵՎ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆԻ

30 Յունուար, 2018-ին, Երեւանի Պետական Համալսարանի Հայ Բանասիրութեան ֆակուլտետի մէջ տեղի ունեցաւ Միաբանութեանս անդամներէն Տ. Ներսէհ Աբեղայ Ալոյեանի Մագիստրոսական թէզի պաշտպանութիւնը: Հայր Սուրբի Մագիստրոսական թէզի թեման էր «ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻՆ ԵՒ ԻՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ»: Յանձնաժողովի վեց անդամները, գերազանց գնահատելով Հայր Սուրբի կատարած աշխատանքն ու թէզի արդիականութիւնը, ներկայացուած նորութիւնները, որոշեցին անոր շնորհել Բանասիրական գիտութիւններու Մագիստրոսի գիտական աստիճան և գերազանցութեան դիպլոմ:

Աշխատանքը կրբաղկանարներածութենէ, երկուգլուխներէ, եզրակացութիւններէ և օգտագործուած գրականութեան ցանկէ: Ուսումնասիրութեան նիւթը ոչ այնքան Փարպեցիի կենսագրութիւնն էր, որքան անոր գրած պատմութիւնը:

Ղազար Փարպեցի առաւել կամ պակաս չափով ուսումնասիրուած է կամ գրականութեան պատմութեան և կամ տեսական ու քննադատական աշխատութիւններու ու յօդուածներու մէջ:

Հետեւաբար՝ ըստ արժանւոյն գնահատելով հայ հին և միջնադարեան գրականութեան նուաճումներն ու չաւալնելով սպառիչ խօսք ըսել խնդրոյ առարկայ թեմայի մասին, այն պատճառաւ, որ գրականութիւնը խորք է և տարբեր ժամանակներուն այն իւրովի կը մեկնաբանուի: Հայր Սուրբը իր ուսումնասիրութեամբ փորձած է բանասիրութեան մէջ յայտնի տեսակէտներու համադրմամբ և սեփական դիտար-

կումներով ամփոփել և վեր հանել յատկապէս երկու վիճարոյց թեմաներ՝

1. Ղազար Փարպեցիի և Եղիշէի երկերու բնագրային առնչութիւնները,
2. Վարդան Մամիկոնեանի և Վասակ Սիւնիի կերպարներու վերլուծութիւնը:

Աշխատանքի ներածութեան մէջ ներկայացուած էր V-րդ դարու քաղաքական իրադարձութիւնները, և այդ միջավայրին մէջ ստեղծուած պատմագրութեան սկզբնաւորման և հեղինակներու՝ Ագաթանգեղոսի, Փաւստոս Բիւզանդի, Մովսէս Խորենացիի երկերը: Մանաւորաբար Ղազար Փարպեցիի նախորդած պատմիչներու գործերը և հնարաւոր առնչութիւններն իր պատմութեան հետ:

Թէզի առաջին գլուխը նուիրուած էր Ղազար Փարպեցիի և Մովսէս Խորենացիի, ուր զուգադրական մեթոտի կիրառութեամբ Հայր Սուրբը համեմատած է Ղազար Փարպեցիի «Պատմութիւն Հայոց»-ի առաջին դրուագը Մովսէս Խորենացիի «Պատմութիւն Հայոց»-ին հետ և ցոյց տուած երկու երկերու նմանութիւններն ու տարբերութիւնները: Փորձած է մատնանշել երկու երկերու միմեանց հետ ունեցած առնչութիւնները, անդրադարձած է նաեւ Սահակ Պարթեւի տեսիլքին, քանի որ այն տարօրինակ երեւոյթ մըն է Փարպեցիի պատմութեան մէջ: Դէպքերու ընթացքը յանկարծ կ'ընդհատուի և բոլորովին նոր՝ նախորդ և յաջորդ հատուածներու հետ անհամեմատելի աստուածաբանական հատուած մը կը սկսի:

Բնագրային որոշ հատուածներու համեմատութենէն յետոյ, Հայր Սուրբը եկած է այն եզրակացութեան, որ Փարպեցի՝ օգտուած է Մ. Խորենացիի «Պատմութիւն Հայոց»-էն, ըստ երեւոյթին Սիւնիքի մէջ անցուցած իր փախուստի երեք տարիներու ընթացքին, երբ կը ճգնէր Խորենացիի հետ, հաւանաբար այդ ժամանակ Խորենացի տակաւին չէր աւարտած իր պատմութիւնը, այլ գրելու ընթացքին մէջ էր:

Երկրորդ ամենածաւալուն գլուխին մէջ, դարձեալ զուգադրական մեթոտի օգնութեամբ ուսումնասիրած է V-րդ դարու մէկ այլ հեղինակի՝ Եղիշէի «Վասն Վարդանայ և Հայոց Պատեռագմին» երկի հետ Ղազար Փարպեցիի «Պատմութիւն Հայոց»-ին երկրորդ դրուագի ունեցած նմանութիւններն ու տարբերութիւնները: Քննած, և ապա անդրադարձած է յատկապէս Վարդանի և Վասակի կերպարներուն, երկու պատմագիրներու կողմէ անոնց բնութագրական նկարագրութիւններուն, Փարպեցիի կողմէ Վարդանի սրբացումին ու Եղիշէի կողմէ անոր հերոսացումին:

Քննած ու մանրամասն համեմատած է Ղազար Փարպեցիի և Եղիշէի երկերը և յանգած այն եզրակացութեան, որ ա) ըստ ամենայնի Ղազար Փարպեցի կամ օգտուած է Եղիշէի պատմութենէն կամ, որ աւելի հաւանական է բ) օգտուած է Մայր Աթոռի կաթողիկոսական դիւանէն ու Մատենադարանէն, ուր պահպանուած պէտք է ըլլային ապստամբութեան տարիներու գրագրութեան փաստաթուղթեր, կամ ատոնց պատճէններ:

Աշխատանքն աւարտած է եզրակացութիւններ բաժնով, ուր, ի մի բերելով և ամփոփելով ամբողջ ուսումնասիրութեան դրոյթներն ու բովանդակութիւնը, կատարած է իր եզրայանգումները: